ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ

Ղ Ե Կ Ա Վ Ա Ր

Երևան – 10, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 1

« » մայիսի 2019 թ. N

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ - ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
պարոն ՏԻԳՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Գալստյան

Համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 66-րդ և 77-րդ հոդվածների՝ Ձեզ ենք ներկայացնում՝

1) «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Խ-088-04.04.2019-ՊԱ-011/0) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունները.

2) Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի մայիսի 3-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող) նշանակելու մասին» N 483 - Ա որոշումը:

Հարգանքով՝

ԷԴՈՒԱՐԴ ԱՂԱՋԱՆՅԱՆ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Խ-088-04.04.2019-ՊԱ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ

«Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն նախատեսվում է «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասից հանել «Հատուկ պետական պաշտպանության ենթակա անձանց անվտանգության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի» բառերը:

Օրենքի նախագծի հիմնավորման մեջ նշվում է, որ օրենքի նախագծի ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 42-րդ հոդվածի 1-ին մասի հետ հակասությունը վերացնելու նպատակով, որի համաձայն յուրաքանչյուր ոք ունի իր կարծիքն ազատ արտահայտելու իրավունք: Այս իրավունքը ներառում է սեփական կարծիք ունենալու, ինչպես նաև առանց պետական և տեղական ինքնակառավարման մարմինների միջամտության և անկախ պետական սահմաններից՝ տեղեկատվության որևէ միջոցով տեղեկություններ ու գաղափարներ փնտրելու, ստանալու և տարածելու ազատությունը: Ըստ օրենքի նախագծի՝ «Հատուկ պետական պաշտպանության ենթակա անձանց անվտանգության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված պաշտոնատար անձանց արարողակարգային ծախսերի, կեցության, սննդի և տրանսպորտային սպասարկման՝ ներառյալ տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման և նորոգման ոլորտում հատուկ տեխնիկական և ծրագրային, ռազմական տեխնիկայի, սպառազինության, ռազմամթերքի և ռազմատեխնիկական միջոցների ապահովման համար անհրաժեշտ ապրանքների, աշխատանքների և ծառայությունների մասին տեղեկատվությունը խիստ արժեքավոր է, և այն անհրաժեշտ է լրագրողական հետա-

քննություն իրականացնելու համար, ինչպես նաև լրջորեն նվազեցնում է պետության հաշվետվողականությունը:

Գտնում ենք, որ օրենքի նախագծի ընդունումը չի կարող հիմնավոր համարվել մի շարք պատճառներով: Այսպես, Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 42-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն կարծիքի արտահայտման ազատությունը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ պետական անվտանգության, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց պատվի ու բարի համբավի և այլ հիմնական իրավունքների ու ազատությունների պաշտպանության նպատակով:

Այսինքն՝ տեղեկատվության ազատության իրավունքը բացարձակ չէ, և այն կարող է սահմանափակվել օրենքով նախատեսված հիմքերով՝ նշված նպատակներից ելնելով:

Ինչպես բխում է «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի վիճարկվող դրույթից՝ հասարակության տեղեկատվության ազատությունը պետք է սահմանափակվի, երբ խոսքը վերաբերում է ազգային անվտանգության ապահովման և «Հատուկ պետական պաշտպանության ենթակա անձանց անվտանգության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված պաշտոնատար անձանց արարողակարգային ծախսերի, կեցության, սննդի և տրանսպորտային սպասարկման՝ ներառյալ տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման և նորոգման ոլորտում հատուկ տեխնիկական և ծրագրային, ռազմական տեխնիկայի, սպառազինության, ռազմամթերքի և ռազմատեխնիկական միջոցների ապահովման համար անհրաժեշտ ապրանքներին, աշխատանքներին և ծառայություններին:

Համադրելով օրենքի նախագծով վիճարկվող դրույթը Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 42-րդ հոդվածի 3-րդ մասի հետ՝ անհրաժեշտ է պատասխանել հետևյալ հարցին. արդյոք Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 42-րդ հոդվածի 3-րդ մասում նշված «պետական անվտանգության» եզրույթը ներառում է «Հատուկ պետական պաշտպանության ենթակա անձանց անվտանգության ապահովման

մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված պաշտոնատար անձանց արարողակարգային ծախսերի, կեցության, սննդի և տրանսպորտային սպասարկման՝ ներառյալ տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման և նորոգման ոլորտում հատուկ տեխնիկական և ծրագրային, ռազմական տեխնիկայի, սպառազինության, ռազմամթերքի և ռազմատեխնիկական միջոցների ապահովումը:

Այսպես, «Հատուկ պետական պաշտպանության ենթակա անձանց անվտանգության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի համաձայն պետական պահպանությունն իրականացնող մարմինը պետական պահպանության ծառայությունն է: Պետական պահպանության ծառայությունն *Ազգային անվտանգության ծառայության* գրասենյակ է:

Այս առնչությամբ «Ազգային անվտանգության մարմինների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի համաձայն ազգային անվտանգության մարմինները Հայաստանի Հանրապետության անվտանգության ապահովման համակարգի բաղկացուցիչ մասն են և իրենց իրավասության սահմաններում ապահովում են անձի, հասարակության ու *պետության անվտանգությունը*:

Հետևաբար, պետական պահպանության ծառայության գործունեությունը ևս ուղղված է պետության անվտանգության պահպանությանը. ընդ որում, խոսքը վերաբերում է ոչ միայն «Հատուկ պետական պաշտպանության ենթակա անձանց անվտանգության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված անձանց ռազմական տեխնիկայի, սպառազինության, ռազմամթերքի և ռազմատեխնիկական միջոցների, այլև արարողակարգային ծախսերի, կեցության, սննդի և տրանսպորտային սպասարկման ապահովման համար անհրաժեշտ ապրանքներին, աշխատանքներին և ծառայություններին, քանի որ այդ համատեքստում խոսքը ոչ այնքան «Հատուկ պետական պաշտպանության ենթակա անձանց անվտանգության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ

մասով նախատեսված պաշտոնատար անձանց անվտանգության մասին է, այլ՝ պետության անվտանգության:

Օրենքի նախագծի ընդունման հիմնավորման մեջ նշված է նաև «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի՝ պետական և ծառայողական գաղտնիք հասկացությունը սահմանող 2-րդ հոդվածը, որի համաձայն պետական գաղտնիքը Հայաստանի Հանրապետության ռազմական, արտաքին հարաբերությունների, տնտեսական, գիտատեխնիկական, հետախուզական, հակահետախուզական, օպերատիվ - հետախուզական գործունեության բնագավառների այն տեղեկություններն են, որոնք պաշտպանվում են պետության կողմից և որոնց տարածումը կարող է ծանր հետևանքներ առաջացնել Հայաստանի Հանրապետության անվտանգության համար: Սակայն, հիմնավորման մեջ չեն նշվում «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ և 12-րդ հոդվածները: Այսպես, տվյալ օրենքի՝ տեղեկությունները պետական և ծառայողական գաղտնիքի շարքը դասելու և դրանց պաշտպանության բնագավառում պետական, տեղական ինքնակառավարման մարմինների և պաշտոնատար անձանց լիազորությունները սահմանող 8-րդ հոդվածի համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարությունը մշակում և հաստատում է պետական գաղտնիքի շարքը դասվող տեղեկությունների ցանկը: Նույն օրենքի 12-րդ հոդվածի համաձայն պետական այն մարմինները, որոնց ղեկավարներն օժտված են տեղեկությունները պետական և ծառայողական գաղտնիքի շարքը դասելու լիազորություններով, մշակում են գաղտնագրման ենթակա տեղեկությունների ընդլայնված գերատեսչական ցանկերը: Գաղտնագրման ենթակա տեղեկությունների հաստատված ցանկի համաձայն հատուկ պետական պաշտպանության ենթակա անձանց կեցության, սննդի և տրանսպորտային սպասարկման, այդ թվում՝ պաշտոնական պատվիրակությունների ընդունելությունների նպատակով միջոցառումների սպասարկման համար Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և դեպքերում պետության

կողմից անհրաժեշտ ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերման գործընթացի վերաբերյալ տեղեկությունները հույժ գաղտնի են, ուստի և «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն դասվում են պետական գաղտնիքի շարքը:

Բացի դրանից՝ օրենքից նույնիսկ հանելով «Հատուկ պետական պաշտպանության ենթակա անձանց անվտանգության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված պաշտոնատար անձանց» բառերը՝ օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասը միևնույնն է կտարածվի «Հատուկ պետական պաշտպանության ենթակա անձանց անվտանգության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված պաշտոնատար անձանց վրա, քանի որ կներառվի օրենքի քննարկվող հոդվածում նշված «ազգային անվտանգության ապահովման» նպատակում: Սակայն դրա հատուկ ընդգծումն օրենքում հետապնդում է այլ մեկնաբանությունները բացառելու և օրենքի նշված հոդվածի կարգավորման շրջանակում «Հատուկ պետական պաշտպանության ենթակա անձանց անվտանգության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված պաշտոնատար անձանց հաստատապես ներառելու նպատակ:

Հաշվի առնելով շարադրվածը՝ առաջարկում ենք օրենքի նախագծով քննարկվող հոդվածները թողնել անփոփոխ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

3 մայիսի 2019 թվականի N 483 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ (ՀԱՐԱԿԻՑ ՁԵԿՈՒՑՈՂ) ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 66-րդ հոդվածի 2-րդ մասը՝

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի առաջին տեղակալ Արտակ Ասատրյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը (Խ-088-04.04.2019-ՊԱ-011/0) քննարկելիս Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

2019 թ. մայիսի 3
Երևան

ՆԱԽԱԳԻԾ

Խ-088-04.04.2019-ՊԱ-011/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ԳՆՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության 2016 թվականի դեկտեմբերի 16-ի ՀՕ-21-Ն օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասից հանել «, «Հատուկ պետական պաշտպանության ենթակա անձանց անվտանգության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված պաշտոնատար անձանց» բառերը:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԳՆՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

«Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ Օրենք) 15-րդ հոդվածի 2-րդ մասով կարգավորվում են պետական գաղտնիք պարունակող գնումների պլանին վերաբերող հարաբերությունները: Համաձայն հիշյալ դրույթի՝ պետական գաղտնիք պարունակող գնումների պլանում ներառվում են ազգային անվտանգության ապահովման, «Հատուկ պետական պաշտպանության ենթակա անձանց անվտանգության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված պաշտոնատար անձանց արարողակարգային ծախսերի, կեցության, սննդի և տրանսպորտային սպասարկման, ներառյալ՝ տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման և նորոգման ոլորտում հատուկ տեխնիկական և ծրագրային, ռազմական տեխնիկայի, սպառազինության, ռազմամթերքի եւ ռազմատեխնիկական միջոցների ապահովման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները եւ ծառայությունները:

«Հատուկ պետական պաշտպանության ենթակա անձանց անվտանգության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ պետական պահպանություն տրամադրվում է՝

1) Հանրապետության նախագահին.

2) վարչապետին.

3) Ազգային ժողովի նախագահին.

4) սույն օրենքի 6.1-ին հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքերում՝ վարչապետի թեկնածուին:

Այսպիսով, պարզ է դառնում, որ պետական գաղտնիք պարունակող գնումների պլանը ներառում է ազգային անվտանգության ապահովման, ինչպես նաև «Հատուկ պետական պաշտպանության ենթակա անձանց անվտանգության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված պաշտոնատար անձանց՝ Հանրապետության նախագահի, վարչապետի և Ազգային ժողովի նախագահի ծախսերի վերաբերյալ գնումները:

Այսինքն՝ երկրի առաջին երեք դեմքերին վերաբերվող գնումները համարվում են պետական գաղտնիք, և արդյունքում՝ այդ մասով իրականացվող պետական գնումները դուրս են մնում օրենսդրությամբ սահմանված երաշխիքներից: Սա մասնավորապես հակասում է Սահմանադրության 42-րդ հոդվածի 1-ին մասին, ըստ որի՝ յուրաքանչյուր ոք ունի իր կարծիքն ազատ արտահայտելու իրավունք: Այս իրավունքը ներառում է սեփական կարծիք ունենալու, ինչպես նաև առանց պետական և տեղական ինքնակառավարման մարմինների միջամտության և անկախ պետական սահմաններից՝ տեղեկատվության որևէ միջոցով տեղեկություններ ու գաղափարներ փնտրելու, ստանալու եւ տարածելու ազատությունը:

«Տեղեկատվության ազատության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասով սահմանվում են տեղեկատվության տրամադրումը մերժելու հիմքերը, որոնց թվում է նաև տեղեկատվությունը պետական գաղտնիք համարվելու փաստը:

«Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասում սահմանվում է պետական գաղտնիք հասկացությունը, որի համաձայն՝ պետական գաղտնիքը Հայաստանի Հանրապետության ռազմական, արտաքին հարաբերությունների, տնտեսական, գիտատեխնիկական, հետախուզական, հակահետախուզական, օպերատիվ-հետախուզական գործունեության բնագավառների այն տեղեկություններն են, որոնք պաշտպանվում են պետության կողմից, և որոնց տարածումը կարող է ծանր հետեւանքներ առաջացնել Հայաստանի Հանրապետության անվտանգության համար:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ հիմնավորված չի կարող համարվել այն, որ հատուկ պետական պաշտպանության ենթակա անձանց արարողակարգային ծախսերի, կեցության, սննդի և տրանսպորտային սպասարկման, ներառյալ՝ տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման և նորոգման ոլորտում կատարվող գնումների և կատարված ծախսերի վերաբերյալ տեղեկատվության ազատությունը պետք է սահմանափակվի՝ որպես պետական գաղտնիք, քանի որ՝

- Նախ՝ այդ տեղեկատվությունը խիստ արժեքավոր է և կարեւոր պետական գնումների մասին զանգվածային լրատվության միջոցների հրապարակումների և հանրությանը իրազեկելու, ինչպես նաև լրագրողական հետաքննություններ իրականացնելու համար:

- Երկրորդ՝ այդ տեղեկատվությունը պետական գաղտնիքների ցանկում ներառելը լրջորեն նվազեցնում է պետության հաշվետվողականությունը հանրության առջև և իջեցնում պետական գնումների նկատմամբ քաղաքացիների վստահության մակարդակը: Սա խոչընդոտներ է ստեղծում նաև կոռուպցիայի դեմ ուղղված պայքարի գործընթացների, այդ թվում՝ քաղաքացիական հասարակության կողմից դրանց վերահսկելու համար: Ակնհայտ է, որ այդ պայքարը հնարավոր չէ արդյունավետ իրականացնել՝ բացառելով պետության առաջին դեմքերի գործունեությանը վերաբերող պետական գնումների թափանցիկությունը:

- Երրորդ՝ հիշյալ տեղեկատվությունը պետական գաղտնիք կարգելիս պետությունը պարտավոր էր հիմնավորել, թե ինչու է ավելի վաղ ժամանակաշրջանում այդ տեղեկատվությունը բաց եղել և ինչով է պայմանավորված քաղաքականության փոփոխությունը: Քանի որ Օրենքի ընդունման հիմնավորումներում առաջացած կոնկրետ խնդիրներին և պատճառներին անդրադարձ չի եղել, պարզ է դառնում, որ այս մոտեցումը նախկին իշխանության փակ գործելաոճի, կոռուպցիոն ռիսկերը հասարակությունից թաքցնելու ձգտման արդյունք է:

Այսպիսով, սահմանափակումը չի համապատասխանում քաղաքացիների տեղեկատվություն ստանալու իրավունքին, հակասում է կոռուպցիայի դեմ պայքարի ռազմավարական ծրագրին: Քաղաքացիական հասարակությունը հնարավորություն չի ունենում վերահսկել գործարքները: Հաշվետվողականության բացակայությունը կարող է հանգեցնել մի կողմից կոռուպցիոն ռիսկերի ավելացմանը, մյուս կողմից բյուջետային միջոցների նպատակային և արդյունավետ օգտագործելու պետության պարտականության կատարման նկատմամբ քաղաքացիների վստահության նվազմանը:

Ներկայացված նախագծով առաջարկվում է հանել Օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված պաշտոնատար անձանց վերաբերող հատվածը:

Նախագծի ընդունման արդյունքում՝ Օրենքով սահմանված գնումների հաշվետվողականության երաշխիքները կտարածվեն նաև Հանրապետության

նախագահի, վարչապետի և Ազգային ժողովի նախագահի ծախսերին՝ թափանցիկ և վստահելի դարձնելով պետական գնումների խնդրո առարկա հատվածը: Բացի այդ, Օրենքի քննարկվող դրույթը կհամապատասխանեցվի կոռուպցիայի դեմ պայքարի ռազմավարական ծրագրին: Նախագծի ընդունման դեպքում կբարձրացվի պետական պաշտոնատար անձանց պատասխանատվությունը գնումների գործընթացի նկատմամբ:

Ներկայացված նախագիծը մշակվել է «Խոսքի ազատության պաշտպանության կոմիտե» հասարակական կազմակերպության հետ միասին: